

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԱՐՄԻՆԵ ՍԵՐՁԵՅԻ ԱՂԱԶԱՆՅԱՆ**

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ  
ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԱՌՑԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան - 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Ֆլջյան Լուսինե

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Սիմոնյան Արմինե

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հովսեփյան Գոհար

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան


Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 13-ին՝ ժամը 13:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի ԵՊՀ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

 Ե.Լ. Երզնկյան

## ԱՅԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլոբալ համացանցը և հաղորդակցության նոր ձևերի կիրառումը նպաստում են լեզվական համակարգի և դրա կառուցվածքի զարգացմանը, քանի որ շփման նոր ձևաչափը ենթադրում է նոր գործիքների, լեզվական կառույցների և միավորների զարգացում, ինչպես նաև արդեն առկա լեզվական միջոցների վերաիմաստավորում: Առցանց միջավայրը նպաստում է լեզվական նոր երևույթների զարգացմանը տարբեր հարթություններում: Դրա արդյունքում ավանդական այն եզրերը, որոնք մինչ այդ կիրառվել են որոշակի իմաստներ արտահայտելու համար, այսօր ունեն այլ գործաբանական նպատակներ:

Առենախոսության թեմայի **արդիականությունը** պայմանավորված է այն հանգամանքով, որ առցանց հաղորդակցման ձևերն օրեցօր ավելի են տարածվում՝ դառնալով ժամանակակից մարդու առօրյայի անբաժան բաղադրիչը:

Սույն աշխատանքում հետազոտության **օբյեկտն** անգլալեզու համաժամանակյա չաթն է որպես հաղորդակցման ձև և տեքստ: Բանն այն է, որ չաթի այս տեսակը հարուստ է լեզվական այն երևույթների դրսևորմամբ, որոնք տարանջատում են հաղորդակցման տվյալ ձևը մյուսներից: Ուսումնասիրության **առարկան** համաժամանակյա չաթերում օգտագործվող հապավումներն ու համառոտագրություններն են, դրանց տեսակները, ձևաբանական, ոճական, գործաբանական յուրահատկությունները:

Աշխատանքի **նորույթը** առցանց համաժամանակյա չաթերում կիրառվող հապավումների և համառոտագրությունների լեզվաոճական առանձնահատկությունների, ինչպես նաև դրանց շնորհիվ ստեղծված տեքստի նոր տեսակում կիրառվող նոր նշանների վերիանումն է:

Մինչ այժմ լեզվաբաններն իրենց ուսումնասիրություններում առաջնությունը տվել են առցանց չաթերին առնչվող առանձին լեզվական խնդիրների լուսաբանմանը և դրանց գիտական քննությանը (Դ. Քրիստալ, Ք. Թիարլոու, Ս. Հերրինգ, Ք. Վերրի, Հ. Կորտիի, Ս. Վեբեր, Ջ. Ստիվենսոն, Ս. Կաստրո, Խ. Ջառազա, Խ. Սաեզ, Ա. Նեբոթ, Ռ. Դելարբեր, Ռ. Պոտապովա, Մ. Մակարով, Մ. Շկոլովայա, Ե. Գորոշկո, Ա. Պերելունով, Պ. Կոնդրաշով, Ա. Տրավին, Ն. Անդրիասովա, Լ. Ֆլջան և այլն): Հապավում և համառոտագրություն երևույթներն ուսումնասիրվել են մասնակիորեն՝ դիտարկվելով որպես առցանց գրույցներում ժամանակ և տարածություն տնտեսելու միջոց: Սույն աշխատությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով **առաջինն է**, որտեղ համակողմանի վերլուծության են ենթարկվում առցանց համաժամանակյա չաթի հապավումների և համառոտագրությունների ծագումնաբանական, նշանագիտական, ձևաբանական, ոճական և գործառութային առանձնահատկությունները:

Ուսումնասիրության **հրատապությունը** պայմանավորվում է այն հանգամանքով, որ առցանց չաթերում լայնորեն կիրառվող հապավումներն ու համառոտագրություններն արտահայտում են նոր իմաստներ, որոնք *կարող են ջընկույվել կամ թուր ընկալվել այդ նշանային համակարգին չտիրապետող մարդկանց կողմից*: Այստեղ հարց է ծագում. արդյո՞ք հնարավոր է առանձնացնել այսպես կոչված «չաթի լեզու» իրողությունը, որն իր էությամբ տարբերվում է այլ խոսքի ձևերից լեզվաոճական միջոցների կիրառման յուրահատկություններով:

Ատենախոսության **նպատակն** է ներկայացնել առջանց հաղորդագրությունների (չաթի) ժանրում կիրառվող հապավումներն ու համառոտագրությունները, դրանց լեզվաոճական յուրահատկությունները, եզրաբանական, ծագումնաբանական, գործառնությանին բնորոշ գծերի ամբողջությունը:

Ատենախոսության մեջ մենք դիտարկում ենք հապավումներն ու համառոտագրությունները ոչ միայն որպես այդպիսիք՝ մեր ուշադրությունը սևեռելով դրանց արտահայտած իմաստներին և երանգներին, այլև քննարկում ենք դրանք ավելի լայն հարթության վրա՝ փորձելով պարզաբանել, թե արդյոք այս լեզվական միավորները չաթի ժանրում ընկալվում են որպես կրճատ միավորներ: Այս խնդրի լուծումը չափազանց կարևոր է մեր աշխատանքի համար: Լեզվական տարբեր երևույթներ միախառնվում և ծուլվում են, և անհրաժեշտություն է առաջանում ճշգրտելու դրանց նոր կարգավիճակը: Մեր առջև դրված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում կարևորել ենք հետևյալ **խնդիրների լուծումը**.

1. որոշարկել առջանց խոսույթի՝ որպես լեզվական երևույթի յուրահատկությունները:

2. ուսումնասիրել առջանց հաղորդակցումը՝ որպես խոսույթի գրավոր և բանավոր ձևերի միասնության արգասիք, վեր հանել հաղորդակցման այս ձևերի յուրահատկությունները:

3. հետազոտել չաթի՝ որպես առջանց խոսակցական ժանրի լեզվական, ոճական և գործաբանական առանձնահատկությունները:

4. ուսումնասիրել համառոտագրությունը և հապավումը՝ որպես լեզվական երևույթ, վերլուծել դրանց ձևավորման ու զարգացման սկզբունքները, դասակարգել դրանք ըստ տեսակների, վերհանել և վերլուծել գործաբանական յուրահատկություններն անգլալեզու համաժամանակյա չաթերում:

5. վերլուծել անգլալեզու համաժամանակյա չաթերում համառոտագրությունների ու հապավումների լեզվաոճական և գործաբանական յուրահատկությունները:

Ատենախոսության մեջ կիրառվել են առջանց հաղորդակցության և չաթի ժանրի լեզվական խնդիրներին, հապավման ու համառոտագրության՝ որպես բառագիտական և ոճաբանական երևույթներին առնչվող հարցադրումների, տեսակետների մեկնաբանության և փաստերի վերլուծության սկզբունքները, լեզվական վերլուծության, դիտման, փոխակերպման, նկարագրման, գուգադրական վերլուծության, վիճակագրական **մեթոդները**:

Ատենախոսության շրջանակներում **տեսական նյութի** համար հիմք են ծառայել թեմային վերաբերվող հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսպաներեն և գերմաներեն լեզուներով տարաբնույթ հետազոտություններ, բազմաթիվ գրքեր, գիտական հոդվածներ, կայքերում տեղադրված նյութեր՝ ապահովելու համար հետազոտության առավել համոզիչ արդյունքներ:

**Գործնական նյութի** համար հիմք են ծառայել անգլալեզու առջանց անվճար չաթերի զրույցներից վերցված մոտ 600 հապավումներ ու համառոտագրություններ: Ուսումնասիրվել են միայն չաթի մշտական մասնակիցների օգտագործած հապավումներն ու համառոտագրությունները: Մենք հանդես ենք եկել դիտորդի դերում և չենք մասնակցել զրույցներին: Ուսումնասիրված հապավումների և համառոտագրությունների ամբողջական

ցանկը բառարանի տեսքով կցված է աշխատանքին (տես ատենախոսության 1-ին հավելվածում):

Ատենախոսության **տեսական արժեքը** համակարգչային խոսույթի և մասնավորապես չաթի ժանրի լեզվական յուրահատկությունների որոշարկումն է, որն իր նպաստն է բերում համակարգչային խոսույթի տեսության զարգացման գործին: Սույն աշխատանքը որոշակի ներդրում է առցանց համաժամանակյա չաթերի հապավումների և համառոտագրությունների լեզվաբանական հետազոտության բնագավառում, ինչպես նաև հիմք հետագա նմանատիպ ուսումնասիրությունների համար:

Հետազոտության **գործնական նշանակությունն** այն է, որ ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել կուրսային աշխատանքներ, բակալավրական և մագիստրոսական թեզեր գրելիս և հատուկ դասընթացներ կազմելիս: Այն գործնական օգնություն կարող է լինել առցանց հաղորդակցության հնարավորություններից օգտվողների համար:

Հետազոտության **կառուցվածքը** պայմանավորված է հետազոտության նպատակով և խնդիրներով: Այն բաղկացած է ներածությունից, երեք զլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի նիստում (2013 թ. հունիսի 5):

**Ներածության** մեջ հստակեցվում են ատենախոսության թեման, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, ատենախոսության նպատակը, խնդիրները, կառուցվածքը, տեսական և գործնական արժեքները:

Աշխատանքի առաջին գլուխը (**«Առցանց հաղորդակցման լեզվական և արտալեզվական յուրահատկությունները»**) բաղկացած է երեք ենթազլխից: Առաջին ենթազլուխը (**«Առցանց հաղորդակցման ուսումնասիրման լեզվական հայեցակետը»**) ներկայացնում է առցանց հաղորդակցմանն առնչվող տարբեր տեսակետներ, որոնք բնութագրում են հաղորդակցման այս տեսակը: Վիրտուալ աշխարհն այն առցանց միջավայրն է, որը ստեղծվել է համացանցի միջոցով և ապահովում է ոչ կենդանի շփում օգտագործողների միջև: Վիրտուալ աշխարհի շփումն անհրակական է, սակայն այն իրականացվում է իրական մարդկանց կողմից (մարդիկ կարող են հանդես գալ հորինված անուններով):

Առցանց հաղորդակցության ձևավորման վրա անմիջական ազդեցություն են ունեցել ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական գործընթացները: Արտալեզվական գործընթացները պայմանավորված են համակարգչային միջավայրով, քանի որ շփումը մարդկանց միջև ապահովվում է միջնորդի կողմից: Ներլեզվական գործոնները պայմանավորված են լեզվական համակարգի առանձնահատկություններով. որքանով կարող են այս կամ այն կառուցվածքները կիրառվել հաղորդակցման նոր պայմաններում, բանավոր և գրավոր հաղորդակցումից գատ, տեղեկատվության փոխանցման ինչ նոր ձևեր են ստեղծում և ապահովում դրանց հաջող իրականացումը:

Համակարգչային հաղորդակցման լեզուն դիտարկվում է ինչպես գրավոր և բանավոր խոսքերի միախառնման արդյունքում ստացված երևույթ<sup>1</sup> (սակայն ոչ մի դեպքում դրանց արդյունք կամ հետևանքը չէ<sup>2</sup>), այնպես էլ որպես մի այլ, յուրահատուկ, ոչնչի չնմանվող երևույթ:

Ուսումնասիրելով համակարգչային հաղորդակցման տեքստերի բավականին մեծ քանակություն՝ եկանք այն եզրակացության, որ սխալ կլիներ պարզապես ասել, որ այս հաղորդակցումը բանավոր և գրավոր խոսքի տարատեսակ է, թեև այն հենված է բանավոր և գրավոր խոսքերի դրսևորման ձևերի վրա: Այն բանավոր գրույց է՝ ներկայացված գրավոր տեսքով: Սակայն, որքան էլ որ առցանց հաղորդակցումը ձևավորված լինի այս երկու ոճերի միախառնման արդյունքում, այն բավականաչափ տարբերվում է դրանից:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում (**«Առցանց խոսույթի ժանրային յուրահատկությունները»**) քննության են առնվում առցանց խոսույթի ժանրային առանձնահատկությունները: Համակարգչով միջնորդավորված հաղորդակցումը մարդկանց շփումն է իրական ժամանակում: Համաձայնվելով Պ. Կոնդրաշովի հետ՝ հարկ ենք համարում նշել, որ մենք առցանց հաղորդակցումը դիտարկում ենք որպես իրական հաղորդակցում վիրտուալ միջավայրում<sup>3</sup>: Սրանով պայմանավորված՝ վիճելի է դառնում «վիրտուալ հաղորդակցում», քանի որ իմաստների որակումը, առկայացման տեսանկյունից՝ իրական է: Այս համատեքստում հարցականի տակ է դրվում այդ եզրը, քանի որ այդպիսի հաղորդակցման շրջանակներում միմյանց հետ են շփվում, մտքեր փոխանակում իրական մարդիկ:

Չաթի լեզվական, բառապաշարային և մասնավորապես կրճատ գրության ձևերի ուսումնասիրության մեջ մեր առջև դրված առաջին խնդիրն է

---

<sup>1</sup> Травин А. Электронная письменно-устная переписка // Девятая статья осенней серии НемКультуры “Мыльно-почтовая опера”. 1 октября 2001. Режим доступа:

[http://old.russ.ru/netcult/20011001\\_travin.html](http://old.russ.ru/netcult/20011001_travin.html).

Бочукова Т. Словообразовательные особенности русского чата // Болгарская русистика, 2003/3-4. Буторина Е. А поговорить? Интернет как лингвистический феномен. В сети медиаморфоз. 2001. Режим доступа: [http://www.gramota.ru/biblio/magazines/gramota/net/28\\_50](http://www.gramota.ru/biblio/magazines/gramota/net/28_50).

<sup>2</sup> Al-Sa'di R. A., Hamdan J. M. “Synchronous Online Chat” English: Computer-mediated communication. World Englishes, Vol. 24, No. 4, 2005.

Crystal D. Language and the Internet. Cambridge: Cambridge University Press, 2006.

Goroshko O., Sokolynskaya H. Linguistic Aspects of Synchronous Chat Discourse (Sketches for Reflection). Available on: [http://www.genderstudies.info/english/eng\\_text13.php](http://www.genderstudies.info/english/eng_text13.php).

Thurlow C., Lengel L., Tomic A. Computer mediated communication: Social interaction and the internet. London: Sage. 2004.

Кондрашев П. Е. Компьютерный дискурс: социолингвистический аспект. Дисс. канд. филол. наук. Краснодар, 2004.

<sup>3</sup> Кондрашев П. Е. Компьютерный дискурс: социолингвистический аспект. Дисс. канд. филол. наук. Краснодар, 2004, с. 24.

պարզաբանել, թե որքանով կարելի է համացանցը համարել գանգվածային հաղորդակցման միջավայր: Բոլոր ժանրերը բնորոշվում են կառուցվածքային յուրահատուկ միջոցների առկայությամբ, լեզվական և ոճական հատկանիշներով: Առջանց հաղորդակցումն ինքնին ընդլայնում է ցանկացած տեսակի խոսույթի սահմանները: Ընթերցողը համապատասխան գերտեքստային հղումների միջոցով կարող է անցում կատարել մի ժանրի տեքստից մյուսին: Ցանցային «տեքստերը» տեքստերի մեջ խախտում են ժանրի միատարր լինելը և նպաստում ժանրերի ծուլմանը, ինչպես նաև անցմանը մեկ ժանրից մյուսը:

Երկրորդ կարևոր խնդիրը կապված է խոսակցական և ոչ խոսակցական առջանց ժանրերի հետ: Համակարգչային հաղորդակցման ժանրային դասակարգումը կախված է հաղորդակցման կառուցվածքից: Այս հաղորդակցման ժանրերը ձևավորվում են ըստ մասնակիցների քանակի, տեղեկատվության ուղղվածության, գրույցի թեմայի և նպատակի:

Համակարգչային հաղորդակցման կառուցվածքային նկարագրման ամենատարածված դասակարգումը հիմնվում է հաղորդակիցների քանակի վրա<sup>4</sup>: Դրանից ելնելով առանձնացվում են հետևյալ տեսակները. *մարդուց համակարգիչ, մի մարդուց մյուսին, շատերից մեկին, մեկից շատերին, շատերից շատերին*: Այսպիսով, ըստ ուսումնասիրված նյութի, առանձնացվում են համակարգչային հաղորդակցման հետևյալ ժանրերը՝ *էլեկտրոնային փոստ (e-mail), առցանց գրույց (chat), հայտարարությունների տախտակ (Bulletin Board System - BBS), համացանց (world wide web - www), վիրտուալ աշխարհներ (virtual worlds), առցանց գիտաժողովներ (e-conferences), ֆորումներ (forums), բլոգեր (blogs)* և այլն:

Համաժամանակյա չաթը համակարգչային հաղորդակցման այն ժանրն է, որն ամենից շատ է նմանվում լեզվի խոսակցական ոճին:

Առաջին գլխի երրորդ ենթագլուխը (**«Չաթը՝ որպես առցանց հաղորդակցման ժանր»**) անդրադառնում է առցանց չաթի լեզվական առանձնահատկություններին:

Չաթի ժանրն ունի իր տարատեսակները՝ *համաժամանակյա և տարժամանակյա: Տարժամանակյա* հաղորդակցման ժամանակ մասնակիցների անմիջական առկայությունն անհրաժեշտ չէ: Մի մասնակիցը կարող է հաղորդագրությունն ուղարկել և սպասել պատասխանի: Պատասխանը կարող է անմիջապես չլինել: *Համաժամանակյա չաթերում* մասնակիցների ներկայությունը պարտադիր է: Հաղորդագրությանը պետք է արծագանքել մի քանի վայրկյանի ընթացքում, այլապես այդ տեղեկատվությունը կկորչի և կմնա անպատասխան: Համաձայնելով Դ. Քրիսթալի<sup>5</sup> հետ՝ ասենք, որ հենց համաժամանակյա չաթերում է, որ լեզուն դրսևորման յուրահատուկ միջոցներ է փնտրում: Ժամանակի գործոնը հաղթահարելու համար գրույցի մասնակիցներն անտեսում են լեզվի օրինաչափությունները:

---

<sup>4</sup> Горошко Е. И. Интернет-жанр и функционирование языка в Интернете // Попытка рефлексии. Саратов: Издательский центр «Наука», 2009, Выпуск 6, «Жанр и язык». Режим доступа: <http://www.textology.ru/article.aspx?aid=206>.

<sup>5</sup> Crystal D. Language and the Internet. Cambridge: Cambridge University Press, 2006.

Առջանց գրույցը հաղորդակցման յուրահատուկ միջավայր է, լեզվի կիրառման առանձնահատուկ ձև: Չաթի ժանրը համակարգչի միջոցով իրականացվող համաժամանակյա հաղորդակցում է: Այն տեղի է ունենում իրական ժամանակահատվածում՝ մտքերի գրավոր փոխանակման եղանակով: Առջանց չաթի լեզվի ձևավորման վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպես, օրինակ, ժամանակը, նիշերի քանակը, գրույցի մասնակիցների ջանքերի խնայումը, տեքստի արտահայտչականության բարձրացումը և այլն:

Բացի բանավոր-խոսակցական լեզվին բնորոշ առանձնահատկություններից, առջանց հաղորդակցումն ունի մի շարք հատկություններ, որոնք բնորոշ են միայն այս ժանրին: Դրանք են *մականունների առկայությունը (nicknames, nicks)*, *հապավումների և համառոտագրությունների գործածությունը (u - you, thnx=thanks, lol=laugh out loud)*, *զգացմունքների պատկերավոր արտահայտումը խորհրդանշանների միջոցով (:S - շփոթվածություն, ☹ - տխրություն, ☺ - ուրախություն)*, *տառային կրկնությունները (koooooooooool, excuzzzzz, hugssssssssss)*, *կետադրական նշանների, մեծատառերի բացակայությունը (wow wat a days girls come in girls dreams, how r u angel, im - I'm)*, *անավարտ նախադասությունները, միայն բացականչական և հարցական նշաններից կազմված նախադասությունները (been for like a few months now, urself angel?, ????????)*, *բառերի և արտահայտությունների սխալ գրությունը, տպագրական սխալների հաճախակիությունը, ոչ գրական լեզվի կիրառությունը, որն ըստ մեզ բանավոր խոսքի նմանակման միջոց է (watchn, hun, bro)*, *մեծատառերի բացակայությունը նույնիսկ առաջին դեմք «I»-ի դեպքում (i love english but icant speak ☹)*, *բառերի տարանջատման միջակայքի բացակայություն (farealrdyexcuzzzzz, ywhun)* և այլն<sup>6</sup>:

Առջանց հաղորդակցման չաթի ժանրն իրականացնում է *հաղորդակցական, իմացաբանական, տեղեկատվական, մշակութաստեղծ, հուզական, գեղագիտական, ոճական, կուտակային, խորհրդանշական, մեղմաստական, զավեշտային և այլն գործառնություններ*:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Հապավումներն ու համառոտագրություններն առջանց չաթի ժանրում») բաղկացած է երկու ենթազվիսից: Առաջին («Հապավումների և համառոտագրությունների առաջացումը, տեսակները և գործառնությունները») ենթազվիսում ուսումնասիրվում է

<sup>6</sup> Crystal D. Language and the Internet. Cambridge: Cambridge University Press, 2006.

Weber M. Peculiarities of the Language Used in Chatroom Interactions. Respectus Philologicus (Respectus Philologicus), issue: 12 (17) / 2007.

Иванов Л. Ю. Язык интернета: заметки лингвиста. 2000. Режим доступа: <http://www.ivanoff.ru/rus/OZHWEB.htm#> Функции ГС.

Милеева М. Н., Угарова О.В. Особенности современного компьютерного сленга. Режим доступа: <http://main.isuct.ru/files/publ/vgf/2007/02/143.htm>.

Потапова Р. К. Новые Информационные Технологии и Лингвистика. Учебное пособие. Москва 2005.



հապավումների և համառոտագրությունների առաջացումը, գործառութները և տեսակները:

Հապավման գործընթացն ընկալվում է որպես նշանի նշանակիչի կրճատում, այնպես, որ ամբողջը ներկայացվում է դրա մի մասով: Կրճատման գործընթացում առաջանում է երկրորդային անվանական նշան՝ հապավում: Այն կարող է սկզբնական բառի կամ բառակապակցության հետ ունենալ տարբեր հարաբերություններ, ինչով էլ պայմանավորվում են հապավման կադապարները և տեսակները<sup>7</sup>:

Կրճատ գրությամբ միավորներն առանձնանում են բառակազմական այլ միջոցներից նրանով, որ կրճատված միավորը տվյալ հասկացության միակ բառային արտահայտությունը չէ: Այն համագոյակցում է լեզվում ամբողջական բառերի հետ, որոնցից առաջացել է<sup>8</sup>:

Հապավման գործընթացը դիտարկվում է նաև որպես «պարարտ հող» բառարանի թարմացման համար: Այն օգտագործում է բառակազմական արդյունավետ գործընթացներ, որոնք արդեն իսկ գոյություն ունեն լեզվում և նպաստում են նոր միավորների տարածմանը: Դրանք, ի վերջո, մուտք են գործում բառապաշար<sup>9</sup>:

Ընդհանրացնելով հապավումների տեսակների վերաբերյալ արված ուսումնասիրությունները՝ կարելի է առանձնացնել դրանց հիմնական տեսակները. *պատկերավոր, վանկային (վերջնային, սկզբնային, միջնային, եզրային), բարդ վանկային (բուն բարդ վանկային, վանկային միակցումներ), տառային կամ սկզբնատառային, տառավանկային, մասամբ սկզբնատառային, թվային*: Սրանք հապավումների և համառոտագրությունների դասակարգման ամենատարածված, ավանդական տարբերակներն են:

Ժամանակի և հատկապես առջանց հաղորդակցման զարգացման ընթացքում ստեղծվել են հապավումների և համառոտագրությունների այնպիսի տեսակներ, որոնք հատուկ են միայն հաղորդակցման այս տեսակին: Դրանք առաջացել են առջանց գրույցների տեքստերում և շարունակում են զարգանալ՝ առաջացնելով նորանոր տեսակներ:

Դրանցից ամենատարածվածները հետևյալներն են<sup>10</sup>. *ինչյունային նմանակումներով համառոտագրություն, երբ բառի տառային գրությունը*

---

<sup>7</sup> Кочарян Ю. Г. Аббревиация в английской военной лексике. Автореферат дисс. канд. филол. наук. Москва, 2007.

<sup>8</sup> Никишина В. О. Некоторые некуррентные способы образования современной английской лексики // Вестник ПГЛУ - № 2, 2009, с. 24.

<sup>9</sup> Rua P. L. Keeping up with the times: Lexical creativity in electronic communication. Lexical creativity, Texts and Contexts, vol. 58. Edited by Judith Munat. John Benjamins Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2007. Available on: <http://lexis.univ-lyon3.fr/spip.php?article101>.

<sup>10</sup> Попова П. К. Новые Информационные Технологии и Лингвистика. Учebное пособие. Москва 2005.

Crystal D. The joy of txt. Spotlight, November 2008, pp. 16-21. Available on: [http://davidcrystal.com/DC\\_articles/Internet13.pdf](http://davidcrystal.com/DC_articles/Internet13.pdf).

փոխարինվում է հնչյունագրությամբ (*u - you, r - are, ur - your, և այլն*), համառոտագրված երկընտրական հարց (*m/f? = male or female*), տղված ձայնավորներով համառոտագրություն (*ppl - people, dwn - down, lng - long*), ընթրեսային համառոտագրություն (*evey1 - everyone, b4 - before, w8 - wait*): Համառոտագրության յուրահատուկ տեսակ է @ նշանի գործածությունը *at նախդիրի փոխարեն*: Առջանց հաղորդակցության ժամանակ օգտագործվում են հապավումների և համառոտագրությունների ինչպես յուրահատուկ, նոր, այնպես էլ հիմնական տեսակները: Հապավումներն ու համառոտագրությունները չաթի ժանրում կատարում են հետևյալ գործառույթները՝ *անվանական, խտացնող, մեղմասական, տեղեկատվական, խորհրդանշական, ոճական, հումորային*:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում (*«Չաթերի հապավումների և համառոտագրությունների նշանագիտական հարացույցը»*) հապավումներն ու համառոտագրություններն ուսումնասիրվում են որպես նոր լեզվական նշաններ: Լեզվական այս միավորները դիտվում են որպես «ծածկագրված լեզու», որոնց դերը և գործառույթները պարզաբանման կարիք ունեն: Այսօր արդեն ստեղծված են առջանց թարգմանչական ծրագրեր, որոնք թարգմանում են առջանց հաղորդակցման համառոտագրություններով և հապավումներով հարուստ տեքստերը՝ դրանք վերածելով դասական անգլերենին հատուկ կառույցների:

Առջանց տեքստերի նշանները (տվյալ դեպքում համառոտագրություններն ու հապավումները) առաջացել են իրական լեզվի նշաններից: Սրանց յուրահատկությունը նրանում է, որ այստեղ գործում է նշանի փոփոխելի լինելու հատկությունը: Բառերը, բառախմբերը, նախադասությունները, որոնք մենք օգտագործում ենք ամենօրյա կյանքում, այս միջավայրում, պահպանելով իրենց սկզբնական իմաստը, նոր տեսք են ստանում:

Օրինակ. *«բարձրաձայն ծիծաղել»* արտահայտությունը անգլերենում ունի *«laugh out loud»* համարժեքը, որն առջանց հաղորդակցման մեջ ստացել է *«lol»* տեսքը:

Առջանց հաղորդակցման մեջ հապավումների ու համառոտագրությունների կատարած դերը գրեթե համընկնում է նշանային համակարգի գործառույթների հետ: Սա թույլ է տալիս վստահորեն ասել, որ հապավումներն ու համառոտագրությունները նույնպես նշանային համակարգի միավորներ են: Սակայն այս երևույթն ավելի խորությամբ ուսումնասիրելու դեպքում գալիս ենք այն եզրակացության, որ առջանց հաղորդակցման հապավումներն իրականում ոչ թե պարզապես նշաններ են, այլ կրկնակի նշան են:

Հապավումները կարելի է անվանել *«երկրորդ անվանակարգի միավորներ»*<sup>11</sup>: Հապավումները կրճատում են առաջին անվանակարգի

---

Kortti H. On some similarities between discourse in the Internet Relay Chat and the conventions of spoken English, 1999. Available on: <http://www.student oulu.fi/~hkortti/proseminar-final.html>.

<sup>11</sup> Водолазкин Е. Г., Надо развивать аббревиатуры! // Новая газета. Режим доступа: 2010 novayagazeta.ru/society/41204.html.

միավորները (բառեր, որոնք ստեղծվել են «բնական ճանապարհով») և ստեղծում են երկրորդ կարգի միավորներ: Հապավումները նշանագիտական համակարգում դիտվում են որպես նշանի նշան: Նշանն ընդհանրացնում է իրականությունը, իսկ հապավումը իրականությունն է ընդհանրացված երկու անգամ:

Համառոտագրությունների և հապավումների առանձնահատկությունն առցանց չաթերում այն է, որ լեզվական նշանի առաջնային և երկրորդային գործառույթները միախառնվում են՝ ստեղծելով մի այլ, երրորդ երևույթ, որը հատուկ է միայն այս տիպի հաղորդակցմանը:

2. Փիրսը գլոբալ ցանցում տարբերակում է պատկերանշան (իկոնա), ցուցանշան (ինդեքս) և խորհրդանշան (սիմվոլ)<sup>12</sup> միավորները: Հապավումներն ու համառոտագրություններն առցանց չաթի ժանրում *ցուցանշաններ են*: Դրանք կազմում են նմանատիպ հաղորդակցման անբաժանելի մասը: Ստանալով տարբեր մեկնաբանություններ՝ իրենց վրա են վերցնում ժամանակ և տարածություն խնայողի դերը: Ցուցանշանները հուշում են, որ տվյալ վիրտուալ միաջակայրում շփվել ցանկացողները պետք է մտածեն ժամանակը խնայելու և տեղեկատվության փոխանցման առավելագույն արագության մասին:

Հապավումներն ու համառոտագրությունները կարելի է նաև դիտել որպես *խորհրդանշան*, քանի որ գրեթե անհնար է չաթի մասին խոսել առանց հապավումների և համառոտագրությունների: Կրճատ գրություն երևույթը տվյալ ժանրի համար դարձել է խորհրդանշան: Ոչ մի այլ ժանրում հապավում երևույթն այսքան լայն տարածում չի գտել, որքան առցանց չաթի ժանրում:

**Երրորդ գլուխը՝ («Չաթերի հապավումների և համառոտագրությունների լեզվառձակական և գործաբանական առանձնահատկությունները»)** բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին ենթագլխում (**«Չաթերի հապավումների և համառոտագրությունների տեսակներն առցանց հաղորդագրություններում»**) ուսումնասիրվում են հապավումների և համառոտագրությունների այն տեսակները, որոնք օգտագործվում են առցանց չաթերում: Չաթերի հապավումների ձևավորման ամենակտիվ միջոցներից է տառի հնչյունային դրսևորումը: Այստեղ կարևորվում է ոչ թե տառի գրությունը, այլ արտասանությունը, իսկ ավելի հաճախ՝ *այբբենական արտասանությունը*: Նման դեպքերը շատ են, ինչպես օրինակ հետևյալ համառոտագրություններում **«r – are, b – be, u – you, c – see, y – why, n – and»** և այլն: Կան ավելի բարդ համակցություններ: Հնչյունային նման համակցումներն արտասանվում են որպես մեկ ամբողջական բառ: Իրենց կիրառմամբ և արտասանությամբ անկախ համակցումները չաթերում դիտարկվում են որպես բառեր: Դրանք ունեն հնչողություն, իմաստ, ռձակյան արժեք: Սա է պատճառը, որ մասնակիցներն այս համառոտագրություններին և հապավումներին չեն վերաբերվում որպես կրճատ գրությամբ միավորների:

Համառոտագրությունների յուրահատուկ և տարածված խումբ են կազմում *թվային համառոտագրությունները*, որոնք փոխարինում են թվային

---

<sup>12</sup> Colon C. Semiotics in Cyberspace. Apr. 1995. Available on: <http://php.indiana.edu/~ccolon/Semiotics/ccolon3.html>.

հնչյունախմբերին և բառերին: Լայնորեն կիրառվում են **1, 2, 4, 8, 9, 10** թվերը: **1** թիվը համապատասխանում է **one** թվականին և **one** բառին (*no1-no one, any1-anyone*), **2**-ը՝ **two** թվականին, **to** նախդիրին և **too** մակբային (*nice 2 meet u 2 kissin, 2mmorrow-tomorrow,* ), **4**-ը՝ **four** թվականին, **for** նախդիրին և **f** տառին, **[fo:]** հնչյունային խմբին (*i was looking 4 u, be4-before*), **8**-ը, բացի **eight** թվականին փոխարինելուց, իր վրա է վերցնում նաև **[eit]** հնչյունային խմբի գործառույթը (*m8-mate, gr8-great, w8-wait*), **9**-ը ներկայացնում է **[ain]** հնչյունային խումբը (*f9-fine*), իսկ ահա **10**-ը հանդես է գալիս **ten** թվականի հնչողությամբ, սակայն փոխարինում է **thank you** բառի հիմնական մասին, որի արդյունքում **thanks**-ը դառնում է **10x**:

Այս ամենի կիրառման արդյունքում առցանց չաթերի տեքստերն օրեցօր ավելի հնարամիտ ու յուրօրինակ են դառնում և ոճապես հարստանում են: Արդյունքում տեքստերը դառնում են զվարճալի, ինչի շնորհիվ էլ չաթերի մասնակիցները հասնում են կատարյալ փոխըմբռնման:

Երկրորդ ենթագրույթը («**Չաթերի հապավումների և համառոտագրությունների ձևաբանական և իմաստաբանական առանձնահատկությունները**») արտացոլում է այն իմաստաբանական և ձևաբանական փոփոխությունները, որոնք կրում են լեզվի կրճատ միավորներն այս ժանրում: Չաթի ժանրի հապավումները կարելի է դասակարգել ըստ հետևյալ *իմաստաբանական խմբերի. հապավումներ, որոնք օգտագործվում են մասնակիցներին ողջունելիս (yw / uw – you’re welcome, ltnc – long time no chat), գրույցի դադար կամ գրույցը լքելու ցանկություն արտահայտող հապավումներ (bbl – be back later, gtg – got to go, pft – pause for thought), գրույցը շարունակելու ցանկություն ցույց տվող հապավումներ (hb – hurry back, sys – see you soon, brb – be right back), տեղեկատվություն ստանալու կամ ճշտելու հապավումներ (a/s// asl – age, sex, location/language, hwp – height, weight, proportial), գրուցակցին տեղեկատվությունը հիշեցնելու կամ մեջբերելու հապավումներ (btw – by the way, imo – in my opinion), վերաբերմունք ցույց տվող հապավումներ (hms – home made smiley, bs – big smile, ilu / ily – I love you), հապավումներ, որոնք օգտագործվում են զվարճանալու կամ վիրավորելու նպատակով (lbs – laughing but serious, rofl – rolling on the floor laughing), գաբմանքի դրսևորման հապավումներ (omg – oh my god, wtf – what the f\*\*\*), կաղապարույթ-հապավումներ (gsoh – good salary, own home, tut – totally unique thought) և այլն:*

Բացի արտահայտած իմաստներից, հապավումներն ու համառոտագրություններն առանձնանում են մի շարք այլ հատկություններով: Առաջին աչքի ընկնող երևույթը համառոտագրությունների և հապավումների *համանունությունն* է: Սրանք կատարում են համանուն բառերի գործառույթ: Համանուն են այն բառերը, որոնք ունեն գրության նույն ձևը, սակայն տարբեր իմաստներ: Չաթերի հապավումների և համառոտագրությունների իմաստը բացահայտվում է միայն տեքստի մեջ՝ կախված ընդհանուր իրավիճակից: Համանուն համառոտագրություններն ու հապավումները շատ են: Ահա դրանցից մի քանիսը. *doc - doctor, document, gt - get, got, good try, y - why, year, ur - your, you are, m - am, male* և այլն (տես ատենախոսության 3-րդ հավելվածում):

Հաջորդ երևույթն անզվալեզու առցանց չաթերում *միևնույն բառի կամ արտահայտության կրճատման տարբեր ձևերի առկայությունն* է: Հապավումների և համառոտագրությունների ձևավորման կարևորագույն սկզբունքներից մեկը

կրճատված միավորի միօրինակությունն է հատկապես նույն տեքստում: Չաթերում տեղի է ունենում ճիշտ հակառակը: Միննույն բառը կամ բառակապակցությունը կրճատվում է ըստ գրույցի մասնակցի տրամադրության և հարմարության: Բոլորովին տարօրինակ չէ, երբ միննույն գրույցում, տեքստում հանդիպում են միանշանակ տարբեր սկզբունքներով կրճատված միավորներ:

Օրինակ

1. «**Welcome**» բառը, որը թարգմանաբար նշանակում է «բարի գալուստ», արտահայտվում է հետևյալ կերպ՝ «**w, wlc, wlcw, wc, welcm**» և այլն:
2. «**How are you?**» նախադասությունը վերափոխվում է հետևյալ կերպ՝ «**h r u, hru, HRU, hw r yu, hwzyu, hryu**» և այլն:
3. «**Because**» բառը, որը թարգմանվում է «որովհետև», ունի համառոտագրված հետևյալ տարբերակները՝ «**bcz, bcos, bec, cos, cuz, cz**» և այլն (տես ատենախոսության 2-րդ հավելվածում):

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում համառոտագրությունների և հապավումների *խոսքիմասային պատկանելությունը* և դրա փոփոխությունն առցանց չաթի ժամրում: Ինչպես բառերը, այնպես էլ առցանց միջնորդավորված գրույցը սպասարկող հապավումներն ու համառոտագրություններն ունակ են նոր երևույթներ նկարագրել՝ փոխելով խոսքիմասային պատկանելությունը:

Չաթում գրուցելու տեսակներից է տեսախցիկով ուղեկցված գրույցը, որն անգլալեզու վիրտուալ միջավայրում հնչում է որպես «**camera chatting**»: «**Camera**» գոյականը, դառնալով նման միջավայրում գրույցների անփոխարինելի մասը, ստանում է կրճատ «**cam**» տեսքը: Ժամանակի ընթացքում այս հապավումը սկսում է փոխարինել «**to chat using cameras**» կամ «**camera chatting**» արտահայտություններին, այսպիսով ստանալով «**to cam**» տեսքը և փոխարինելով բայի:

Օրինակ

*sgtjim [Jul 28, 01:19]: do you have a web cam so we can all see it? (Do you have a web camera so we can all see it?)*

*steveyguy: i'd love to cam for you (I'd love to chat with you using cameras.)*

«**Private room**» արտահայտությունը շրջանառության մեջ է մտել «**pvt**» համառոտագրված տեսքով: Ունի հետևյալ տարատեսակները. բայ՝ «**to pvt (to chat in a private room)**», բայի անցյալ կատարյալ ժամանակաձև՝ **pvted (sent a message to a private room)**, շարունակական՝ **pvtting (chatting in a private room)**, տեղի պարագա՝ **in the PVT (in the private room)**, հոգնակի թվով գոյական **pvtts (private rooms)**», մակբայ՝ «**pvt**»:

Օրինակ

*<tony> any person chat with me pvt (Any person chat with me privately.)*

*<suresh> angelhouda, so would u like to chat in pvt? (Angelhouda, so would you like to chat in the private room?)*

*<Gal> prv from romeo (Private message from Romeo.):*

Ոչ պակաս կարևորություն է ներկայացնում բառերի և բառակապակցությունների *քերականական թվի ճիշտ վերարտադրումը* կրճատ գրության ժամանակ: Հապավումների և համառոտագրությունների հոգնակի թվի կազմությունը ոչ միշտ է արտահայտված դրանց մեջ: Օրինակ անգլերեն «**people**» բառը, որը նշանակում է «ժողովուրդ, մի խումբ մարդ», առցանց

չաթերում օգտագործվում է երկու ձևով՝ «people» և «peoples»: «Peoples» տարբերակը ուսումնասիրված նյութում հանդիպել է միայն համառոտագրված ձևով՝ «ppls, pplz, pps»:

Երրորդ ենթագլուխը վերնագրված է (**«Չաթերի հապավումները և համառոտագրությունները՝ որպես արգելված (տաբու) արտահայտությունների քողարկման միջոց»**): Լեզվում գոյություն ունեն բառեր և արտահայտություններ, որոնք ոչ միշտ կարելի է օգտագործել: Բառապաշարի այդ շերտը համարվում է *արգելված*, քանի որ դրան անդրադառնում են միայն հատուկ նպատակներով: *Արգելված լեզու հասկացությունը զգացմունքայնորեն ուժեղ, վիրավորական բառերի և արտահայտությունների խումբ է, որն ընկալվում է որպես վիրավորանք*<sup>13</sup>:

Դժվար է գտնել առցանց հաղորդակցման այնպիսի տեքստ, որը զուրկ լինի վերոնշյալ բառապաշարից: *Չաթերում արգելված արտահայտությունների կրճատումն ունի առաջին հերթին հումորային բնույթ*, որի միջոցով մասնակիցներն ուշադրություն են գրավում: Չնայած առցանց չաթերի անանունությանը՝ մասնակիցներն իրավունք չունեն միմյանց վիրավորելու և արգելված արտահայտություններ օգտագործելու: Դրանք քողարկելու անհրաժեշտություն է առաջանում:

Գործաբանական առումով այս հապավումներն ավելի հեշտ են կիրառվում: Նմանատիպ շատ հապավումներ արդեն դարձել են կադապարույթներ՝ *«Lmao – laughing my ass off, Lmfao - laughing my f\*\*\*ing ass off, Tyvmf - thank you very f\*\*\*ing much, Omfg – oh my f\*\*\*ing God, Rolmfao - rolling on laughing my f\*\*\*ing ass off, Wtf – what the f\*\*\*»* և այլն:

Մասնակիցներն առցանց զրույցներում օգտագործելով գռեհկաբանություններ և արգելված արտահայտություններ, փորձում են նմանակել բանավոր-խոսակցական ոճին, որն առանձնանում է բառապաշարի ազատությամբ: Շատ դեպքերում նմանատիպ արտահայտություններն օգտագործվում են իրենց հումորային գործառնությով: Բոլոր կոպիտ արտահայտություններն ունեն հասցեատերեր: Դրանք կարող են ուղղված լինել ինչպես կոնկրետ անձանց, այնպես էլ իրավիճակների կամ երևույթների:

Զորրորդ ենթագլուխը (**«Չաթերի հապավումների և համառոտագրությունների գործաբանական յուրահատկությունները»**) անդրադառնում է չաթի ժանրում համառոտագրությունների և հապավումների գործաբանական խնդիրներին:

Առցանց զրույցները զուրկ են հաղորդակցման համար անհրաժեշտ հարալեզվական միջոցներից: Առցանց հաղորդակցման ժամանակ խնդրի լուծումն իրականացվում է պատկերանշանների միջոցով (emojicons), որոնք փոխանցում են մարդկային հույզեր և զգացմունքներ: Սակայն, ըստ մեր մեկնաբանության, այս պատկերանշանները պարզապես զգացմունքների փոխանցման միջոցներ չեն: *Այս երևույթները մենք դիտում ենք որպես տեքստային մակարդակի (տեքստերի – նախադասությունների խմբերի) կրճատումներ*: Առցանց հաղորդակցվողները ժամանակ չունեն, որպեսզի

<sup>13</sup> Allan K., Burrige K. Forbidden Words: Taboo and the Censoring of Language. Cambridge University Press, 2006.

մանրամասնորեն նկարագրեն իրենց հոգեվիճակն ու տրամադրությունը: Օգտագործելով լեզվական այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կետադրական նշանները և տառերը, իրենց հույզերը պատկերավոր ձևով են վերարտադրում:

Չաթերում օրեցօր ավելի հաճախ կրճատվում են ոչ թե բառային, այլ նախադասության կարգի միավորներ (*Idk – I don't know, Hb - hurry back, Yw – you are welcome* և այլն): Այսինքն այն, ինչ շատ տարածք և լեզվական շատ միջոցներ է պահանջում, ավելի հաճախ է կրճատվում: Լեզվի կրճատումն այս ժանրում արտահայտվում է ոչ միայն համառոտագրությունների և հապավումների, այլև պատկերանշանների և նկարների միջոցով:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առջանց գրույցներում հապավումներն ու համառոտագրություններն օգտագործվում են ոչ միայն ժամանակ և տարածություն խնայելու նպատակով: *Դրանց նպատակն է նաև հարմար միջավայր ստեղծելը, պատահական գրուցակիցներին ցանցից հեռացնելը և համախոհներ գտնելը:* Օգտագործվելով համակարգչային հասարակության բոլոր ակտիվ անդամների կողմից դրանք բավականին հետաքրքիր ոճ են ստեղծում այս տեքստերում:

Չաթի ժանրին բնորոշ առանձնահատկությունների ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ *այս ժանրում ամենաբացահայտ գործող սկզբունքը լեզվական միջոցների խնայման /տնտեսման/ սկզբունքն է: Խնդիրը ոչ միայն ինչ ասելու մեջ է, այլ նաև ինչպես ասելու:* Վիրտուալ հաղորդակցումը սահմանափակված է ժամանակով և տարածքով: Հապավումների և համառոտագրությունների լեզվական արժեքը տեղեկատվության մեծ բաժին փոխանցելն է նվազագույն լեզվական միավորների միջոցով: Գերխնդիր է *լեզվի առավելագույն կրճատումը՝ իմաստի ճիշտ ընկալման պայմանով:*

Մյուս խնդիրը, որն արժանի է ուշադրության, հապավումների և համառոտագրությունների միջոցով *տեքստի արտահայտչականության ավելացումն է:* Վիրտուալ գրույցների դեպքում ասելիքը պատկերավոր և արտահայտիչ դարձնելու համար պետք են նվազագույն լեզվական միջոցներ, նիշերի նվազագույն քանակ: Սկզբունքը հետևյալն է. *որքան քիչ միավոր, այնքան շատ արտահայտչականություն: Որքան շատ հապավումներ, այնքան ավելի գունեղ խոսք:*

Հապավումների և համառոտագրությունների դերն առջանց չաթերում չի սահմանափակվում միայն լեզուն կրճատելով: Այն ունի ավելի մեծ դեր, քան կարելի է տեսնել առաջին հայացքից: Կատարելով ոճաստեղծ գործառնություն՝ հապավումներն ու համառոտագրությունները յուրահատուկ կոլոտիտային դաշտ են ստեղծում առջանց չաթերի տեքստերում: Տեքստը դրա միջոցով դառնում է ավելի աչքի ընկնող և նաև խաղարկային: Եթե հարցին նայենք՝ ելնելով չաթերի խաղարկային բնույթից, կարելի է նույնիսկ ասել, որ հապավումներն ու համառոտագրությունները կերպարաստեղծ երևույթ են: Չաթի ժանրը հենված է դերային խաղերի վրա: Մականունների ընտրությունը, լեզվի ուրույն օգտագործումը դրա վառ ապացույցն են: Ամեն մասնակից ունի իրեն հատուկ և բնութագրող հապավումների և համառոտագրությունների թեմատիկ խումբ, որը նրան առանձնացնում է մնացածից: Ժամանակի ընթացքում այդ ուրույն ոճն այնքան է հաստատվում, որ նույնիսկ անվան փոփոխության դեպքում չաթի մասնակիցները հեշտորեն գտնում են իրար:

Վերջին՝ հինգերորդ ենթագլուխը («Չաթերի հապավումների և համառոտագրությունների կիրառման գեղերային տարբերությունները») անդրադառնում է առցանց համաժամանակյա չաթերում լեզվի օգտագործման գեղերային տարբերությունների կիրառման ունեն հապավումների և համառոտագրությունների կիրառման որոշակի գեղերային տարբերություններ, որոնք վերաբերում են ինչպես քանակին, այնպես էլ տեսակներին:

Մեր ուսումնասիրման համար ընտրել ենք չաթի մասնակից 200 կին և 200 տղամարդ: Վերլուծության համար ընտրվել են տարբեր տարիքային խմբերի մասնակիցների զրույցներ: Խմբերը ներառում են դեռահասներից մինչև հիսուն տարեկան տղամարդկանց և կանանց: Զրույցի թեման կենցաղային է: Հարկավոր է նշել, որ մեր ընտրած կանայք և տղամարդիկ առցանց միջավայրում հանդես են եկել որպես կին կամ տղամարդ: Ուսումնասիրված մասնակիցներն առցանց չաթերի մշտական «բնակիչներ» են: Նրանք լավ են տիրապետում վիրտուալ աշխարհի կանոններին և լեզվին:

• *Դեռահասների* տարիքային խմբի մասնակիցների զրույցը կրում է հարձակողական բնույթ: Այն ավելի հագեցած է խոսակցական-ժարգոնային արտահայտություններով: Հապավումներ ու համառոտագրություններ քիչ են օգտագործվում: Սա պայմանավորված է տարիքային առանձնահատկությամբ և չաթերում զրուցելու հմտության աստիճանով: Այս տարիքային խմբի մարդիկ նոր են վիրտուալ միջավայրում և դեռ լավ չեն տիրապետում չաթի լեզվական կանոններին:

• *Քսանից երեսուն* տարեկանների խմբում գեղերային առանձնահատկություններն ավելի են դրսևորվում: Մասնակիցների շփումն ազատ է և անկաշկանդ: Ժամանակ և տարածություն խնայելու նպատակով հաճախ են դիմում հապավումների և համառոտագրությունների օգնությանը: Տղաներն ավելի հաճախ կրճատում են բառակապակցություններ և նախադասություններ, իսկ աղջիկները՝ բառեր: Այս տարիքային խմբում տղամարդիկ ավելի հաճախ են օգտագործում հապավված նախադասություններ: Նրանց զրույցների առանցքում են համառոտագրությունների ու հապավումների *խոսքիմասային փոփոխությունը / pvt – private / pvt – chatting in a private room, pm – private message room / pm – to chat in a private message room/, քերականական թվի պահպանումը / lil – little / lillz – littles, perv – pervert / pervs – perverts /, միևնույն միավորի տարբեր ձևերը / perv – pervert, pervy – pervert, pervs – perverts /, համանունությունը /ur – your / ur – you are/:*

Կանայք ավելի զուսպ են համառոտագրությունների և հապավումների օգտագործման հարցում: Նախընտրում են օգտագործել հստակեցված և հասկանալի տարբերակներ: Ավելի քիչ են դիմում նախադասությունների կրճատմանը, նախընտրում են համառոտագրությունները:

• *Երեսունից քառասուն* տարեկանների խմբում հապավումների և համառոտագրությունների օգտագործման հաճախականությունն ամենաբարձրն է: Ավելի հաճախ օգտագործվում են հապավումներ, քան համառոտագրություններ: Կանանց և տղամարդկանց օգտագործած հապավումների և համառոտագրությունների տեսակներն ու քանակը գրեթե համընկնում է: Տպավորություն է ստեղծվում, որ հաղորդակցվողների միջև կան երբևէն պայմանավորվածություն: Սա բացատրվում է զրուցակիցների ունեցած



լեզվական փորձով և ժամանակի ու տարածության տնտեսման անհրաժեշտության հստակ ընկալմամբ:

- *Քառասունից հիսուն* տարեկանների խումբը պահվածքի առումով նմանակում է քսանից երեսուն տարեկանների խմբին: Օգտագործվում են թե՛ հապավումներ, թե՛ համառոտագրություններ: Միավորների կրճատման սկզբունքները գրեթե նույնն են: Տղամարդիկ ավելի հաճախ են օգտագործում հապավումներ և համառոտագրություններ, քան կանայք:

Այս տարիքային խմբում ավելի հաճախ օգտագործում են համառոտագրությունների և հապավումների հետևյալ տարբերակները:

- *Տղամարդիկ կիրառում են գործողություն ցույց տվող հապավումներ:* Այս հապավումներն իրենց անվանական բնույթը փոխել են բայականի (*msg – to send a message, pvt – to chat privately, pm – to chat in a private message room*):

- *Կանայք և տղամարդիկ նախընտրում են ձայնավորի գեղջումով համառոտագրություններ (dwn – down, fwd – forward, knw – know, ppl – people, wht – what, wrk – work, sly – sily):*

- *Կանանց դեպքում քերականական թվի ճիշտ օգտագործման կանոնների պահպանումը կանայական է (min – minutes, ppl – people, pvts – private messages):*

Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տղամարդիկ ավելի շատ են հակված ասելիքը կրճատելուն, քան կանայք: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք ավելի հաճախ կրճատում են զգացմունքայնորեն ավելի հագեցած արտահայտություններ: Նրանք նաև օգտագործում են միևնույն արտահայտության կրճատ դրսևորման ավելի շատ տեսակներ (*lol, lols, lolz, lolums*), քան տղամարդիկ:

Տղամարդիկ ավելի հաճախ են դիմում պատկերային և թվային հապավումների ու համառոտագրությունների օգնությամբ (*j/k – just kidding, w/c – welcome, s/w – so what?, l8r – later, b4/be4 – before, ne1 – anyone, s1 – someone, 2nite – tonight, 2morrow – tomorrow, p2p – person to person/talk in a private room* և այլն), քան կանայք:

Հետաքրքրության է արժանի այն փաստը, որ արգելված արտահայտություններ պարունակող հապավումները, գռեհկաբանությունների կրճատ գրության ձևերն օգտագործվում են հատկապես կանանց կողմից:

Ատենախոսության «Եզրակացություն» բաժինն ամփոփում է աշխատանքի արդյունքները, ինչպես նաև ուրվագծում հապավումների և համառոտագրությունների զարգացման հիմնական ուղիներն ինչպես չաթի ժանրում, այնպես էլ առցանց խոսույթում ընդհանրապես: Դրանք են.

1. Առցանց զրույցները բանավոր խոսքի գրավոր արտահայտությունն են, սակայն դրանք ոչ բանավոր, ոչ էլ գրավոր լեզվի նման չեն: Դրանք յուրօրինակ տեքստեր են, որոնք արժանի են մանրակրկիտ ուսումնասիրության:

2. Չաթի ժանրում էական է լեզվի կարճ և հնարամիտ կիրառումը: Այս ժանրում լեզուն բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝ մականունների առկայություն, հապավումների և համառոտագրությունների օգտագործում, զգացմունքների պատկերավոր արտահայտում խորհրդանշանների և տառային կրկնությունների միջոցով, կետադրական նշանների բացակայություն, բառերի և արտահայտությունների մտադրված սխալ գրություն (դա մենք մեկնաբանում ենք որպես բանավոր խոսքի նմանակման միջոց), տպագրական սխալներ

հաճախականություն, մեծատառերի և բառերի տարանջատման միջակայքի բացակայություն:

3. Չաթի ժանրում հապավումներն ու համառոտագրությունները կրկնակի նշան են: Դրանք առաջանում են իրական կյանքի երևույթներն անվանող նշանների կրճատման արդյունքում և օգտագործվում են առաջնային անվանակարգի միավորների հետ զուգահեռ:

4. Հապավումներն ու համառոտագրությունները չաթի ժանրում ցուցանշաններ և խորհրդանշաններ են: Դրանք ցուցանշաններ են, քանի որ վկայում են ժամանակի և տարածության սղության, մասնակիցներին հիշեցնում հաղորդակցման արագությունն ապահովելու անհրաժեշտության մասին: Դրանք դիտարկվում են որպես խորհրդանշաններ են, որովհետև ժամանակակից չաթի ժանրն անպատկերացնելի է առանց կրճատ գրության: Կրճատ գրությունն այս ժանրի համար դարձել է խորհրդանշան:

5. Չաթերում հաղորդակցման կազմակերպումը հենվում է լեզվի միջոցների տնտեսման սկզբունքի վրա: Ասելիքն անհրաժեշտ է կազմակերպել հնարավորին չափ կարճ՝ օգտագործելով նվազագույն լեզվական միջոցներ: Հապավումների և համառոտագրությունների միջոցով գրույցի համար համապատասխան մթնոլորտ է ստեղծվում, պատահական մարդիկ հեռացվում են ցանցից, ձևավորվում է խումբ: Հապավումների և համառոտագրությունների օգտագործումն ավելացնում է տեքստի արտահայտչականությունը: Որքան քիչ միավոր, այնքան շատ արտահայտչականություն տեքստում: Ինչքան շատ հապավում, այնքան ինքնատիպ խոսք:

6. Զրույցի մասնակիցներն ավելի հաճախ կրճատում են բառակապակցություններ և նախադասություններ: Շատ են օգտագործվում սկզբնատառային, հնչյունային նմանակմամբ, սղված ձայնավորով, թվային, խառը տիպի և այլ տեսակի հապավումներ ու համառոտագրություններ:

7. Չաթերի հապավումները կարելի է դասակարգել ըստ իմաստային խմբերի, որոնք անընդհատ փոփոխվում են: Գոյություն ունեն բառի, բառակապակցության, նախադասության կրճատման տարբեր ձևեր: Միևնույն իմաստ արտահայտող լեզվական միավորը կրճատվում է ոչ թե ըստ ընդունված կարգի, այլ ըստ գրույցի մասնակցի ցանկության: Առանձնահատուկ խումբ են կազմում համանուն հապավումներն ու համառոտագրությունները:

8. Հապավումները և համառոտագրությունները հեշտությամբ փոխում են խոսքիմասային պատկանելությունը՝ այդպիսով նկարագրելով միանգամայն տարբեր երևույթներ: Չաթերում հապավումների կազմման գործընթացում կրճատվում են ոչ միայն լիարժեք, այլև սպասարկու բառերը. նախդիրները, հոդերը, ստացական և անձնական դերանունները, շաղկապները: Չի պահպանվում նաև բառերի քերականական թվի ճիշտ վերարտադրումը: Մասնակիցների համար հապավումներն ու համառոտագրությունները եզակի թվով բառեր են՝ անկախ սկզբնական միավորում թվի քանակից:

9. Հապավումների և համառոտագրությունների օգտագործումը չաթերում որպես արգելված արտահայտությունների կրճատ գրություն, կատարում են հենց հումորային գործառույթ: Փորձելով ստեղծել իրավահավասարություն և գրույցի անմիջական մթնոլորտ՝ հաղորդակցվողները

դիմում են այնպիսի միջոցների, որոնք ցույց են տալիս գրուցակիցների հավասարությունը վիրտուալ կյանքում: Արգելված արտահայտությունների հապավված տարբերակների օգտագործումը կանանց և տղամարդկանց կողմից հենց դրա ապացույցն է:

10. Չաթում (վիրտուալ իրականություն) հստակորեն տարբերակվում են «կնոջ լեզուն» և «տղամարդու լեզուն»: Վերլուծված գործնական նյութը ցույց տվեց, որ տղամարդիկ ավելի հաճախ են դիմում լեզվի միավորների կրճատմանը, քան կանայք: Սա պայմանավորված է տղամարդկանց վարքագծի գործնականությամբ: Կանայք հաճախ են օգտագործում զգացմունքայնորեն հագեցած, իսկ տղամարդիկ՝ պատկերային և թվային հապավումներ և համառոտագրություններ:

11. Հապավումների և համառոտագրությունների ուսումնասիրման գենդերային հայեցակերպը հանգեցնում է երկու իրարամերձ իրավիճակների: Մեկը տղամարդկանց և կանանց օգտագործած լեզվի հուզականության առավելագույն դրսևորումն է, որն ընդգծում է իգական և արական սեռերի տարբերությունը: Մյուսը կիրառվող լեզվական միավորների «միատարրությունն ու միանմանությունն» է, որը ստվերում է թողնում կին և տղամարդ սեռային տարբերությունը:

Հապավումներն ու համառոտագրությունները բազմագործառութային լեզվական իրողություններ են: Դրանք ցույց են տալիս լեզվական միավորների կրճատման գործընթացի զարգացումն առջանց չաթերում: Հապավումներն ու համառոտագրություններն ակտիվորեն թափանցում են իրական կյանք, միջանձնային հարաբերությունների ոլորտ՝ կապ հաստատելով համակարգչային վիրտուալ միջավայրի և ակտուալ իրականության միջև:

### **Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Համացանցային չաթերի որոշ լեզվառճական առանձնահատկությունների շուրջ // Արդի բանասիրության հիմնախնդիրները, Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, Երևան, «Լինգվա» հրատ., 2009, Պրակ 8, էջ 5-12:
2. Հապավումների և համառոտագրությունների դասակարգային և գերծառութային յուրահատկություններն ինտերնետային չաթի ժանրում // Օտար լեզուները Հայաստանում, Գիտամեթոդական հանդես, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., N 3, 2010, էջ 51-57:
3. Էլեկտրոնային հապավումները և համառոտագրությունները՝ որպես լեզվական նշան // Օտար լեզուները Հայաստանում, Գիտամեթոդական հանդես, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., N 5, 2012, էջ 30-40:

АРСИНЕ СЕРГЕЕВНА АГАДЖАНЯН

**ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ  
АББРЕВИАТУР И СОКРАЩЕНИЙ АНГЛОЯЗЫЧНЫХ СЕТЕВЫХ  
СООБЩЕНИЙ**

Диссертация на соискание ученой степени  
кандидата филологических наук

по специальности 10.02.07 "Германские языки"

Защита состоится 13-го декабря 2013г. в 13:30 на заседании  
специализированного совета 009 ВАК РА, действующего в Ереванском  
государственном университете (Ереван, Алека Манукяна1).

**Резюме**

Работа посвящена изучению лингвостилистических особенностей аббревиатур и сокращений англоязычных сетевых сообщений.

**Целью** диссертации является представление аббревиатур и сокращений, применяемых в жанре сетевых сообщений (чатов), их лингвостилистических особенностей, исследование терминологического, этимологического, функционального комплекса аббревиатур и сокращений.

В рамках диссертации поставлены следующие **задачи**:

1. Выделить особенности сетевой речи как лингвистического явления;
2. Изучить сетевое общение как продукт слияния письменной и устной речи, выявить особенности данной формы общения;
3. Исследовать лингвистические, стилистические и прагматические особенности чата как сетевого разговорного жанра;
4. Изучить аббревиатуру и сокращение как лингвистическое явление, проанализировать принципы их формирования и развития, классифицировать их по видам, раскрыть и проанализировать прагматические особенности англоязычных синхронных чатов;
5. Проанализировать лингвостилистические и прагматические особенности сокращений и аббревиатур в англоязычных синхронных чатах.

**Актуальность** темы диссертации обусловлена тем, что формы сетевого общения с каждым днем распространяются все шире, становясь неотъемлемой частью быта современного человека – со всеми присущими им и нуждающимися в исследовании лингвистическими реалиями. Особого внимания заслуживает вопрос о том, почему данная форма общения настолько принята и предпочтительна, а также – почему зачастую живое общение уступает формам сетевого общения, которое получает все более широкое распространение в сфере общения разных общелингвистических слоев. Необходимость в исследовании указанного вопроса вызвана тем, что

используемые в сетевых чатах аббревиатуры и сокращения выражают новые значения, которые могут быть не поняты или неверно истолкованы людьми, не владеющими этой знаковой системой. Здесь возникает вопрос: можно ли выделить так называемый «язык чата», который по своей сути отличается от других форм речи спецификой применения лингвостилистических средств.

**Научная новизна** диссертации заключается в выявлении лингвостилистических особенностей аббревиатур и сокращений, применяемых в синхронных сетевых чатах. В диссертации мы рассматриваем не только аббревиатуры и сокращения как таковые, заостря внимание на выражаемых ими значениях и нюансах, но и переносим их в другую плоскость, пытаясь выяснить, принимаются ли эти лингвистические единицы в жанре чата как сокращения или нет. Решение данной проблемы чрезвычайно важно для нашей работы. Различные лингвистические явления объединяются и сливаются, и возникает необходимость в уточнении их статуса в лингвистическом аспекте.

**Теоретическое значение** диссертации состоит в уточнении лингвистических особенностей компьютерной речи, в частности, жанра чата. Выявлены закономерности применения аббревиатур и сокращений в жанре чата и закономерности развития данного слоя лексики языка, а также раскрыты их стилистические, морфологические, прагматические и другие особенности. Показано, что аббревиатуры и сокращения могут стать гендерными показателями и способом маскировки запрещенных выражений (табу). Данная работа представляет собой определенный вклад в области лингвистического изучения аббревиатур и сокращений синхронных сетевых чатов, а также является основой для дальнейших подобных исследований.

**Практическое значение** исследования заключается в том, что результаты диссертации могут быть использованы учащимися при подготовке курсовых работ, бакалаврских и магистерских работ, а также соответствующими специалистами при составлении специальных курсов лекций по данной теме. Она может послужить практическим пособием для пользователей сетевого общения.

**ARSINE S. AGHAJANYAN**

**LINGUO - STYLISTIC PECULIARITIES OF ABBREVIATIONS AND  
CONTRACTIONS IN ENGLISH ONLINE CHATS**

Research paper for acquisition of scientific degree in the field of philological sciences, with specialization in 10.02.07 “Germanic languages”.

The defence of the dissertation will take place on the  
13<sup>th</sup> of December, 2013 at 13:30 p.m. in  
Yerevan State University (Yerevan, Alek Manukyan 1).

**Abstract**

The **research** explores the linguostylistic peculiarities of abbreviations and contractions in the genre of English on-line chats.

The **aim** of the research is to present the abbreviations used in English online chats, their linguistic features altogether with terminology, origin, types and functions.

To achieve the goal of the research the following **objectives** are set forth.

- 1.To describe the nature and importance of the online discourse as a new medium of communication;
- 2.To reveal the main linguistic peculiarities of internet discourse by comparing it with the traditional forms of language communication, that is, oral and written speeches;
- 3.To study the linguistic, stylistic and pragmatic peculiarities of online chats;
- 4.To analyze the origins of the abbreviations as a linguistic phenomenon as well as to examine their functions and types;
- 5.To reveal the functions, linguostylistic and pragmatic features of abbreviations in online synchronous chats;

The **topicality** of the paper is conditioned by the fact that online means of communication due to the frequency of their use have become an indispensable part of the modern society and spread their influence in various spheres of human life. It is conditioned by several factors, which are as follows:

- the analysis of the differences between the traditional types of communication and on-line communication;
- to clarify why this new type of communication is so preferred by people,
- the study of the linguostylistic peculiarities of abbreviations of online chats, the importance of studying the features of “the language of chats” which are different because of the way the language is used.

The **novelty** of the research is provided by the comprehensive study of the abbreviations of online synchronous chats due to which new signs are brought forth. Abbreviations in this type of communication are not just regarded as abbreviated language means as such. We discuss them in a broad sense as not only words, but phrases and sentences may also be contracted or abbreviated. There is need to define the new linguistic status of these widely used units.

Many linguists have turned to the study of separate linguistic issues of abbreviations in online synchronous chats but they have never been complete and, as such, have not been presented as holistic works. Thus, the present thesis, with its content and objectives, is the **first** study where a comprehensive analysis is presented regarding the structural, linguostylistic and pragmatic peculiarities of abbreviations. Abbreviations are also analysed as gender markers and as masking tool of taboo expressions.

The **theoretical** value of the work is manifested in the multifold study and reasoning of the questions that are brought forth in the paper. The study of the issues analyzed in the work and the conclusions drawn as outcomes of the investigation may serve as a valuable contribution to the development of the theory of abbreviations in on-line communication.

The **practical** value of the dissertation is embedded in the fact that the results of the given analysis can be an investment in the sphere of linguistic study of abbreviations of on-line communication. It can also be a sufficient and tangible help to on-line communicators.

A handwritten signature in black ink, appearing to be 'S. V. ...', located at the bottom right of the page.